

ՀՀ Վայոց ձորի մարզպետը մասնակցել է «Ժողովրդավարության և մարդու իրավունքների կրթությունը Հայաստանում» ծրագրի պաշտոնական բացմանը

17.03.2014



Մ/թ մարտի 14-ին ՀՀ Վայոց ձորի մարզպետ Էդգար Ղազարյանը մասնակցել է Երևանի կոնգրես հյուրանոցում կազմակերպված «Ժողովրդավարության և մարդու իրավունքների կրթությունը Հայաստանում» ծրագրի պաշտոնական բացման միջոցառմանը: Միջոցառման մասնակիցներին ողջունել են Ալեքսանդր Շագաֆյանը (Ժողովրդական կրթության հայկական կենտրոն-ՄԻՎԻՏԱՍ հասարակական կազմակերպության գործադիր տնօրեն), Մանուկ Մկրտչյանը (ՀՀ ԿԳ նախարարի տեղակալ), Անահիտ Բախշյանը (ՀՀ ԿԳ ներքին գործերի հանձնարարության փոխտնօրեն), Էդգար Ղազարյանը (ՀՀ Վայոց ձորի մարզպետ) և Սերոբ Խաչատրյանը (Հայկական-ՄԻՎԻՏԱՍ, ԺՄԻԿ փորձագիտական խմբի ղեկավար): Ծրագրի նպատակն է՝ խթանել հայաստանյան հանրակրթական դպրոցների միջավայրում և շրջանավարտների մոտ ժողովրդավարության և մարդու իրավունքի մշակույթի ձևավորմանը: Միջոցառմանը մասնակցել է նաև ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Արփիար Ղազարյանը: